ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.07.2013թ.
205-ի 8

“Բյուրակն” ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Համլետ Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկություն ստանալու հարցմանը՝ Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանը հայտնել է, որ Երեւանի Անգլիական այգին վարձակալությամբ տրված է “Բյուրակն” ՍՊԸ-ին: Երեւանի Անգլիական այգու (Սունդուկյանի այգու) բարեկարգման աշխատանքների ընթացքում Իտալիայի փողոցի կողմից (Կոնգրես հյուրանոցի կողմից) մուտքի աստիճանների կողքին շինարարական աշխատանքները իրականացնող կազմակերպությունը կառուցել էր նաեւ թեքահարթակ: Սակայն, թեքահարթակը ապամոնտաժվեց, եւ այժմ այգու մուտքի աստիճանները համալրված չեն թեքահարթակով: Արդյունքում, այգի մուտք գործելը դժվարամատչելի է մակական սայլակների, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող այն անձանց համար, ովքեր օգտվում են սայլակից:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ինչու՞ ապամոնտաժվեց Իտալիայի փողոցի կողմից Անգլիական այգու մուտքի թեքահարթակը,
2. Նախատեսվու՞մ է արդյոք կառուցել Իտալիայի փողոցի կողմից Անգլիական այգու մուտքի թեքահարթակ,
3. Եթե այո, ապա ե՞րբ, եթե ոչ, ապա ինչու՞:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կից ներկայացնում ենք Կենտրոն վարչական շրջանի պատասխան գրության պատճենը:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան